

ուն միջմաս ՀՅ յարդեցմեծք և առյախքաբարձր և այսու մայնան
առներ պղաւում և պրաւու առաջապարտ ուստ և թուար ուն կամ գում
ունիպաւում մայ խառն և պատ ուն և առանու ուր ամփակն
ունընէն մայ բայլ ուն պատ ուն առաջը ուստ և առաջը ուն
պատ ուն ուր ուն ուն ուն պատ ուն պատ ուն պատ ուն պատ ուն պատ

ՊՈՂՅԳ ԵՒ ՏՈՒՅՑ

Կ. ԿՈՍՏԱՆԵԱՆԻ

Հելլէն աշխարհի մարդիկ ամուսնանախ իրրե պարտք էին
ճանաչում: Համայնքի հիմն ու յարատառութիւնն ընտանիքի մէջ
տեսնելով, նորա ամուսնութեան նպատակը սուրբ էին համարում:
Նոցա հայեացը պէտք էր ամուսնանալ, որպէսզի իւրաքանչիւր
ոք իւր սերունդին յաջորդ և իւր հայրենիքին պահապան և պաշտ-
պան յարուցանէ: Եւ այդ է պատճառա, որ ամուսնանալու ժամա-
նակ այնքան չէին առաջնորդում սիրոյ թելազրութեամբ, ինչ-
պէս այդ յատուկ է ներկայիս մարդուն, այլ հաշուում էին թէ
ինչպէս յաջոր հատուցանեն այդ պարտքը: Այդպիսի հաջուի ար-
դիւնք է այն որ հելլէն աշխարհում կանուխէն հաստատուեցաւ
սովորութիւն՝ ամուսնութեան գոխադաբը խոստում տալուց յա-
ռաջ ապահովել կենակցութեան և զաւակների ապադայի նիւթա-
կան պայմանները: Այդպիսի ապահովութեան գրաւականներն էին
պոյքն և տուայրը: Առաջինը կնոջ բերած բաժինքն է, իսկ երկ-
րորդը մարդու տուած ընծանները: Առանց այդ գրաւականների
տեղի ունեցած՝ ամուսնութիւնը, թէև արգելուած չէր, ապօրինի
մի բան էր համարուում, որի հետևանքները ժառանգներին էր ըգ-
գալի: Այնպէս որ մինչև անգամ հելլէն աշխարհի հասարակական
բարքերի մէջ յաճախ սովորական էր այն, որ բարերարների կամ
հաստատութիւնների հաշուով պոյք էր պատրաստում չքաւոր-
ների համար:

Երկուտակ փոքր ի շատէ անկախ և ապահով կենակցելու
նպատակով յառաջացած այս սովորոյթը տարածուեցաւ և հելլէն
քաղաքակրթութեան ըրջանակի մէջ մտած երկրներում: Հռովմա-
յեցիք էլ նոյնպիսի գաղափարներով էին առաջնորդուում. ուստի
և ամեն տեղ օրինական պահանջների շարքը դասեցին նորա այդ
սովորութիւնը, որ յետոյ մտաւ և հռովմէական օրէնսդրութեան
մէջ: Թէև հայերն իրանց յատուկ տեղական սովորութիւններն ու-
նէին, սակայն պոյքի և տուայրի կիրարկութիւնը ծանօթ էր թէ
նոցա և թէ բոլոր այն ազգերին, որոնք կառավարում էին հռով-

մէական (ապա և բիւզանդական) օրէնքներով: Թէ հայերին ծանօթ էր, գուցէ և շատ սովորական, պառյզի և տուայրի գործածութիւնն, այդ տեսնում ենք նախ և յառաջ այն կանոնապրքից, որ կոչւում է Նոմոս: Այդուղի, ի թիւս այլոց, կան օրէնքներ պառյզի և տուայրի մասին: Թէ մի, Երբ և Բնչ հանգամանքների մէջ է կազմել Նոմոսը, որոշակի ասել դժուար է: Յայտնի է սակայն, որ նորա մէջ բովանդակուած են հումքէական օրէնքներն այնպիսի խմբագրութեամբ, ինչպէս կարող էին լինել բիւզանդական առաջին կայսրների ժամանակ. իրեն օրէնքիր յիշուած են Կոստանդին, Թէոդոս և Լեոն թագաւորների անունները: Արեւելեան ազգերի համար մինչև այժմ պահուած են Նոմոսի հին թարգմանութիւններն ասորի, արար և հայ լեզուներով. դրա իուկապէս ազատ փոխազդրութիւններ են տեղական պէտքերին յարձարեցուցած տեղական բարբառներով: Հնագոյն օրինակներից մէկն, ասորի բարբառով Զ. դարու սկզբներին (510—520 թ.) զրուած, պահուում է այժմ Լոնդրայում: այդ օրինակն հաւանօրէն ^{170/177} թուին գրուած գաղափարի պատճէնն է: Այսպիսով մինք ունենք Նոմոսի հնագոյն օրինակն և. դարու կազմուած, անշուշտ, այն քրիստոնեայ ազգերի համար, որոնք գտնուում էին բիւզանդական կայսրութիւնն արեւելեան նահանգներում: Նոմոսի հայերէն օրինակը փոխազդրուած է ասորերէնից ¹⁾ թէ մւշ ձեռով և Երբ, յայտնի չէ. այդ խնդրի լուսաբանութեան համար մեղ պակասում է հայերէն գրչեայ օրինակների բաղդատութիւնը. յայտնի է միայն, որ Ժ. զարում Գոշ Մխիթար օգտուել է հայերէն Նոմոսից իւր դատաստանագիրը կազմելու ժամանակի. ապացոյց այն սերտ առընչութիւնը, որ կայ Նոմոսի և դատաստանագրքի շատ յօդուածների մէջ ²⁾:

Նոմոսում որոշուած են, ի թիւս այլոց, օրէնքներ պառյզի և տուայրի մասին ³⁾: Այս օրէնքների տրամադրութիւնն այսպէս է.

¹⁾ Նոմոսի ասորերէն, արաբերէն և հայերէն օրինակները միասին, նոցա թարգմանութիւնն և լուսաբանութիւնը գերմաներէն լեզուով հրատարակուած են 1880 թուին վերնազրուու «Syrisch Römisches Rechtsbuch aus dem fünften Jahrhundert, von Dr K. G. Bruns und Dr E. Sachau, Leipzig» այսակցից են քաղուած և մեր վերոյիշեալ տեղեկութիւնները Նոմոսի մասին:

²⁾ Տես Նոմ. (Ճեռ.) Ա. Բ. Գ. դ. ծդ. ծե. ծդ. և այլն. և Դատաստանագիրք (տպ. էջմ.) Բ. Կր. կդ. կդ., դդ. դէ. Ա. ճը. ճթ. և այլն:

³⁾ Պոյգ և տուայր յունարէն ծագութեանին. առաջինն է ուրօնէ, այլ կերպ և վերդի, լատիններէն dos. իսկ երկորդն է ծարքէ, լատ. donatio. դոցա հոմանիշ են բառերս՝ պաշտատական

Եթե մարդիկ ուզում են ամուսնանալ, նախ պէտք է փօխագարձ համաձայնութիւն կայանայ զոյգի մէջ պոռյգի և տուայրի մասին, որոնք պէտք է զրի առնուին. այդ զիրն է, որ մնում է իրեն օրինական դաշն ամուսինների և նոցա զաւակների համար ապագայում։ Պոռյգի արժէքին պէտք է հաւասար լինի տուայրի արժէքը. այդպէս էր մայրաքաղաք կ. Պոլում և արևմտեան նահանգներում. իսկ կայսրութեան արևելեան երկրներում այդպէս չէր. այնուեղ պոռյգի արժէքի կիսին պէտք է հաւասար լինէր տուայրը¹⁾, եթէ մէկն իւր զստերը նշան զննելու ժամանակ խոստանար պոռյգ և այդ գրուէր դաշինքի մէջ, եթէ ամուսինն երկրորդ օրն այն չստանար լիովին, պահանջելու էր նոյն իսկ օրն ինչ որ պակաս էր մնացել. եթէ ծնողը չկարողանային լրացնել, պարտաւոր էին մուրհակ տալ փեսային պակասորդի համար որոշ ժամանակին լրացնելու պայմանով. եթե նոքա այդ պակասը լրացնէին, պարտաւոր էին փեսայից անդորրագիր առնել, որ բաւարարութիւն ստացել է. իսկ եթէ պակասորդը չլրացնէին և հինգ տարի շարունակ փեսան պահանջ յայտնած չինէր, նա այլևս կորցնում էր իրաւունքը, թէ որ ձեռին մուրհակ չկար 2)

Եթէ կինն իւր պոռյգն անհեցնում է իւր ծնողաց կամ աղգականների կողմից նոր ստացուած գոյքերով կամ կարողութեամբ, այն էլ պէտք է յանձննէր մարդուն և նորանից թուղթ առնէր իւր պոռյգին աւելացնելու և նորա հետ միասին անեցնելու համար 3)

Ըստ այժմ տեսնում ենք, որ կնոջ պոռյգն երկու տեսակ է. առաջինն է այն, որ նա ստանում է ծնողներից ամուսնութեան ժամանակ և երկրորդն այն, որ նորան համար է յետոյ իրեն նուէր կամ իրել ժառանգութիւն ծնողներից և ազգակիցներից. երկուսն էլ պէտք է ապահոված լինին զրաւոր կերպով. և այդ երկուսի վերայ էլ հաւասար կերպով օրէնքը սահմաններ է որոշում, աչքի առաջ ունենալով կեանքի այլ և այլ պատահմունքները:

Այսպէս՝ եթէ կինը մեռնի և զաւակ չթողնի, պոռյգի աէքը նորա ամուսինն է. այդպէս էր հին օրէնքը. սակայն Ա. կայսրը (457—474 թ.) սահմանեց, որ եթէ կնոջ հայրը զետ կենդանի է, պոռյգի կէսը լինի նորան, իսկ կէսը մարդուն. եթէ

(պոռյգ) և վարձանք (տուայր). առաջինն, անշուշտ, կապ ունի յունարէն ուսցչէ բառի հետ, որ այլ կերպ ասում է և Նձլամօս այդ է նորապասակների առանձնասենեալը,

¹⁾ S. Syr. Röm. Rechtsbüch. P. 40 կամ հ. 45.

²⁾ S. անդ. L. 126. P. 46.

³⁾ S. անդ. L. 13. հ. 63.

հայրը մեռած լինի, այն դէպքում մարդը ժառանգում է ամբողջ պոռյգն իւր զաւակների անունով. եթէ զաւակներ չկան, կինը կարող է իւր պոռյգի կէսը կատկել ում որ կամենայ ¹⁾:

Եթէ կինը մարդուց բաժանուի առանց օրինական պատճառի, իրաւունք չունի հետը տանելու ոչ իւր պոռյգն և ոչ իւր տուայրը, իսկ եթէ մարդու մահով լինի ամուսնութեան լուծումը, կինն ստանում է ամբողջապէս թէ պոռյգն և թէ տուայրը, եթէ կնոջ մահով լուծուի ամուսնութիւնը, զաւակ ունենան թէ ոչ, մարդն ստանում է ամբողջ տուայրն և պոռյգի կէսը, միւս կէսն յետ է տալիս աներոջ և այն ²⁾:

Եթէ ամուսիններն իրարուց բաժանուել ցանկանան, այն որ ուզում է բաժանուել, թուղթ է ուղարկում միւսին և յայտնում նորա յանցանքը: Եթէ մարդն է յանցաւոր, տալիս է կնոջն ամբողջ պոռյգն ու տուայրը. եթէ կինն է յանցաւոր, տալիս է մարդուն միայն պոռյգը: Եթէ այր և կին սիրով են ապրում և ամուսնութիւնը լուծումը է մարդու մահով, կինն ստանում է ամբողջ պոռյգն և տուայրը, զաւակ լինի թէ ոչ ³⁾:

Եթէ միկին իրեն պոռյգ իրեն հետ բերէ աղախին կամ ոչխարի հօտ և այն, և եթէ աղախինը զաւակ ծնի, կամ խաշինքն աճին, և մարդ ու կին բաժանուել ուղենան, այն ժամանակ կնոջը կըհամանի աճի կէսն և ամբողջ պոռյգը (գլուխը), իսկ աճի միւս կէսը կըհամանի մարդուն ⁴⁾:

Մի կին իրաւունք չունի, քանի գեռ իւր հայրը կամ պապը չիւնդանի են, իւր պոռյգի համար կտակ անել և ժառանգ նշանակէլ. նմանապէս և մի տղամարդ, որի հայրը կամ պապը կան, կըտակ անելու իրաւունք չունի ⁵⁾:

Եթէ մէկն երկու կին է առել, մէկն առանց պոռյգի և միւսը պոռյգով, և երկուսից էլ զաւակ ունի, ժառանգութիւնն հաստում է այն զաւակներին, որոնց մայրը պոռյգ ունէր ⁶⁾:

Եթէ մէկը զաւակներ ունի այնպիսի կնոջից, որը պոռյգ չունէր, և կամենայ կտակով նոցա իրեն ժառանգ նշանակել, կարող է այդ անել այն պայմանով, որ կտակում յիշէ, թէ նոքան իւր զաւակներն են ⁷⁾:

¹⁾ Տ. անդ. Լ. 29. հ. 72.

²⁾ Տ. անդ. Լ. 92. հ. 46—50.

³⁾ Տ. անդ. Բ. 38. հ. 47—49.

⁴⁾ Տ. անդ. Լ. 105. հ. 80. Լ. 123. հ. 90.

⁵⁾ Տ. անդ. Լ. 18. հ. 69. Լ. 20. հ. 70.

⁶⁾ Տ. անդ. Լ. 36. Բ. 16. հ. 12 և 73.

⁷⁾ Տ. անդ. Լ. 35. Բ. 15.

Բոլոր այս օրէնքների հիմնական սկզբունքն, ինչպէս տեսնում ենք, այն է՝ որ բիւզանդական պետութեան սահմաններում ամուսնութիւնն այն ժամանակ էր ճանաչւում օրինական, երբ ամուսինների մէջ հաստատուած էր դաշն, որի մէջ գրով նշանակուած էր պառյզն և տուայրը: Այն ամենն ինչ որ այդ սկզբունքն համեմատ չէր, թէս ներելի, բայց օրինական չէր, ինչպէս երևում է ժառանգական խնդիրների լուծումից:

Դաշն դնելու մասին կայ սակայն բացառութիւն այն աղքա-
րի նկատմամբ, որոնք իրենց յատուկ ծէսերն ունեն Այսպէս նո-
մոսի մի յօդուածն ասում է.

«Է աշխարհ որ ունի սովորութիւն իմ, զի զպոյզմն և զգ-
տուայրն չգրեն ի թղթի, այլ միայն պարզաբար ամուսնանան և
առնուն զպակին աւրհնութեան: ընդունի աւրէնքս զայնպիսին
որպէս զայնոսիկ; որ գրեն զպոյզմն, և որդիքն, որ լինին, ժա-
ռանգեն զինչոն հաւըն, և լինի այս ըստ նոմոսի և ըստ
րութեան երկրի»:

Ասորի օրինակից երևում է, որ այսուեղ խօսքը ձեականու-
թեան վերայ է: ամուսնացողները նախ բերանացի համաձայնու-
թիւն են կայացնում ուշ' ըշ' որ օրէնքի յառաջ նոյն զօրու-
թիւնն ունի, ինչոր պառյզի թուզթթ (որ կուլում էր փերգալ) և երկ-
րորդ՝ նոքա արտաքին հանդիսաւորութեամբ հոչակում են իրենց
ամուսնութիւնը, որ տեղի է ունենում, ինչպէս ասորին է որո-
շում, երբ այրը սկսուառութեան օրհնարանեալ պսակով՝ զարդա-
րած կնքշը նորա ծնողաց տանից իւր բնակարանն է տանում և
այն էլ, ինչպէս արարեկնումն է յիշուած, հրապարակական հան-
դիսով և ուրախութիւններով ։ Այս ձեականութիւնը Խոչընդուն
չէ սակայն, որ այր և կին համաձայնին պառյզի և տուայրի մասին,
որոնք դարձեալ մնում են, ինչպէս կարելի է մակարերել նոմոսի
ՄԲ: յօդուածից, տեղական սովորութիւնների համեմատ:

Այս ամենից հետևում է, որ Նոմոսին նայելով, հռովմէա-
կան օրէնքն ընդունում էր տարրեմ ձեսք ու սահմաններ այն
աղքերի համար, որոնք ունէին իրենց ծէսերը: Նախ՝ այն ինչ տէ-
րութեան արևմուտքի և Կ. Պօլսի համար պարտաւորական էր; որ
պառյզի և տուայրի արժէքն հաւասար լինէր, արևելեան նահանգ-
ներում ներելի էր, որ տուայրի արժէքն հաւասարէր պառյզի
կիսին: Եւ երկրորդ՝ այն ինչ տէրութեան ընդհանուր օրէնք էր
ամուսինների և նոցա ժառանգների իրաւունքը ճանաչել այն

1) Տ. անդ. Լ. 93. Պ. 418, Ար. և 52. հայ 52 (վերջինն ըստ
մեր գրչեայ օրինակի):

գաշնագրով, որ կարենը էր պայզի և տուայրի համար, միւս երկրոներին իրաւունք էր տրուած իրենց տեղական սովորոյթներով վարուել և իրու վաւերական փաստ ամուսնութեան ընդունում էին փոխադարձ բերանացի հաւանութիւնն և հանդիսական տեղափոխութիւնը մի տանից դէպի միւսը:

Յայտնի է, որ Հայերը զեռ Մեծն Տիգրանի օրերից զույն-տում էին յարաբերութեան մէջ Հոռվմայեցոց հետ. ժամանակի ընթացքում Հայաստանի շատ գաւառներ հոռվմէական նահանգ գառան. իսկ քրիստոնէութեան գարերում բիւզանդական կայսրութիւնը, որ նոյն հոռվմէական օրէնքներով էր կառավարուում, շատ սերտ առընչութիւն ունէր Հայոց ներքին գործերի հետ, մասնաւոնդ. Դ. դարի վերջերից սկսած, երբ Հայաստանի արևմբառեան կէսը կայսրութեան երկիր դառաւ: Այն իրողութիւնը, որ Հայոց եկեղեցական կանոններին կից դոյցութիւն ունի Նոմոսը, որ ոչ այլ ինչ է, եթէ ոչ հոռվմէական օրէնքադրութիւն, նաև այն հանգամանքը, որ Նոմոսի մէջ բաւական աեղ են գրաւել պայշտին և տուայրին վերաբերեալ յօդուածները, տեղիք են տալիս մտածելու, որ Հայոց մէջ սովորական է եղել նոյն կրիստոնէութեամբ՝ երևոյթը՝ այն է բանաւոր հաւանութեամբ, կնոջ հանդիսական տեղափոխութիւնը դէպի ամուսնու տունը և, ուր որ սովոր են եղել գրաւոր դաշն գնելու, պայզի կիսին հաւասար տուայրը: Շատ հիմքեր կան մտածելու, որ Հայոց մէջ գրաւոր դաշն հաստատելը սովորական չէ եղել. գլխաւոր հիմքն հէնց այն է, որ նոքա Նոմոսի Մթ. յօդուածի գօրութեամբ ազատ էին առանց դաշինքի ամուսնանալ տեղական սովորութեամբ. քանի որ այդ աւելի դիւրին և կարճ էր, բնական է, որ այդ և ամենից աւելի գործ էր դրւում. այդ սովորոյթին հետեւելով, պայզը դառնում է բանգիր պարզեք, որ կոչի աւժիա ինչպէս որոշում է Միսիթար Գօշ, իսկ տուայրի տեղն անցնում են զանազան ընծաները, որոնք Միսիթար անուանում է երեստեսէք, երեսաց տեսոյ և այն. Ըստ այսմ Հայոց մէջ եղել է օժիտի և երեստեսէքի սովորութիւնը. երկուան էլ կամաւոր, ոչ պարտաւորական և ոչ տահմանաւոր, պարզեներ են առանց գրի, առանց հաստատութեան, կախուած իւրաքանչիւր կողմի կարողութիւնից և ընտանեկան յարմարութիւններից 1): Գուցէ նոյնն է եղել և շատ հին ժամանակներում դեռ քրիստոնէութիւնից յառաջ, ինչպէս տեսնում ենք Արտաշէսի վիպասա-

1) Երեստեսէքի տարրեր արտայայտութիւններն են ներկայիս, և, նադդ կամ բայլը (գլխագին) 2, երեստեսուք, խալաթ, յերաւան կամ յերևան, ծաղ և 3, բերանաբացէք (ա. Գօշ Մթ. Դատ. Ա. Ճիւա Ճնթ.). Բուի թէ սովորականն է երեստեսէքը, որի հո-

Նութեան մէջ: Այնանդ էլ կայ բանաւոր համաձայնութեան ձեզ: այդ է յիշեցնում այս հարցմունքը. «Եւ ուստի՞ տացէ քաջն Արտաշէս հազարս ի հազարաց և բիւրս ի բիւրոց ընդ քաջազգոյ կոյս օրիորդիս Ալանացց: Այնանդ էլ կայ տուայրի (երեստեսէքի) գաղափարը. և Եւ հանեալ զօսկեօն օրկափոկ պարանն... Ընկեց ի մէջը օրիորդին Ալանացց: Այնանդ էլ յիշուած է պառյգի և տուայրի մասին: Ճեղ ոսկի և եղայր ի փխայլութեանն Արտաշէսի, և եղայր մարգարիտ ի նարսնութեանն Սարինկան: Հաւասարի է սակայն, որ քրիստոնէութեան դարերում Հայոց մէջ հովմէշական պռոյգն և տուայրը նոյնութեամբ պահուած չեն, այլ սովորական էր օժիոն և երեստեսուքը: Այդ երեսում է Գօշ Մխիթարի Դատաստանագրքից, որ կազմուել է ԺԲ. դարում հին աւանդութիւնների և կանոնների հիման վերայ: Մխիթար նախ հարկ է համարում նկարագրել մահմեդականների սովորոյթը: Յայտնի է, որ նոքա է. դարից սկսած տիրապետող էին մեր երկրում. նոցա սովորոյթը կարող էր տեղ գտնել Հայոց մէջ. այդ է, անշուշտ, տեղիք տուել Մխիթարին նախ յիշելու նոցա սովորութիւնը, որպէս զի ապա մերի տարբերութիւնը ցոյց տալով, զգուշացնէ. նա ասում է թէ մահմեդականներն յառաջ կարում են կնոջ անձին գին, որ կոչւում է մահը, և որ հովմայեցիք անուանում են տուայր. յետոյ որոշում են կնոջ բաժինն իւր հօր տանից, և այդ կոչւում է պռոյգ. երբոք մարզն ամուսնութեամբ տէր դառնայ կնոջը, մահըն անդառնալի մնում է կնոջը, իսկ երբ զաւակ լինի, մարդը կարող է տիրել պռոյգին բայց ոչ մահըն: Այս նկարագրութիւնը տալուց յետոյ Մխիթար ասում է. Խակ մեր մեջ արդակս չէ: Մեր մէջ մարդը տալիս չէ կնոջն անձին գին (տուայր), այլ քիչ բաններ, որոնք և կոչւում են երեսաց տեսոյ: Կինն իւր բաժինքով զալիս է մարդու տունն և լինում է մարդու ձեռին: Կնոջ մահից յետոյ, թէ որ զաւակ կայ, նախ հոգալու է հոգու բաժինն, և ապա նորա բաժինքի մնացորդը զաւակներին է. թէ զաւակ չկայ, թէն միքանիսը ծնուած լինին, նորա բաժինքն համանելու է ծնողներին կամ եղայլըներին: Եթէ պռոյգը ոսկեղէն կամ արծաթեղէն է, կամ նոյն իրերը կամ նոցա գինը պէտք է վերադարձնել: Եթէ կենզանիք են, աճի կէսն և ամբողջ զլուխը: Հանդերձեղէնը, որ միասին են մաշել, նոյնութեամբ պէտք է վերադարձնեն: Խակ օժիուը պէտք է յիշուի:

մանիշներն են երեսաւեմներիք, երեսջուր և այլն: Գիւղացի լեռնականների մէջ ընդհանրացած է բաշըզ (զիխարկին) կոչւած սուրբը, որ այժմ, կարծես, վերջանալու վրայ է:

(իրենի ինչոր մարդն է տուել). Եթէ մարդ ու կին երկար ժամանակ են միասին ապրել, մարդը պարտաւոր է իրենից բաժին հանել կնոջ, մահուան ժամանակ «իբրև տան տիկնոջն»¹⁾: «Եթէ պատահի մարդուն իւր հօր տանը մեռնել, կամ նորանից բաժանուած, իւր ստացուածքի համար կարող է խօսք անել, ինչպէս կամնայ, բայց կնոջ բերածք պիտի կ վերադարձն եւ ինչոր երեսների համար (երեսաց տեսոյք) նորան տուել է, նոյնը պիտի կ կնոջ մնայ, որովհետեւ այն նորա անձի զինն եւ այն»²⁾: «Սովորութիւն է, որ կինն իւր բաժնով մարդու տունը գնայ... ինչ կին որ իւր բաժնով մարդու մօս գնայ, կամ մարդը մանի կնոջ տունը (տնտեսամյ), և յետոյ մահ պատահի մարդուն, կինը կարող է դուրս գալ տանից իւր բաժնով եւ ինչոր երեսներէ կ կոչւում, այն ել իւր նետ տանի, մահուանի քի որ գրերով եւ վկաներով հաստառած է, որովհետեւ այն է նորա անձի զինը»³⁾:

Այս խօսքերից պարզ տեսնուում է այն, որ Մխիթար իւր յիշեալ կանոնական յօդուածները կազմելիս աշքի առաջ ունեցել է նոմոսը. Հականն այն է, որ կինն հայրական տանից բաժին պիտի ունենայ և մարդն էլ կնոջն ընծաներ պիտի տայ. այդ նոյն պոլյգն ու տուայրն է առանց զրի:

Հին աշխարհը գիտէր դաստիարակել նոր սերունդ ընտանիք ունենալու և պահելու համար. Պոլյգն և տուայրն այդ ընտանիքի միակ նեցուկը չէին: Կար մի այլ գանձ, աւելի ճոխ, աւելի հաստատուն. այդ էր աշխատանքն ու տնտեսութիւնը: Նախ ընտանիքի մէջ էին ձեռք բերում մարդիկ աշխատելու և տնտեսելու ունակութիւնը: Նոյն գործօնների առաջնորդութեամբ ընտանիքից գուրս էին գալիս նորա աշխարհ շինելու և կառավարելու համար. Եղբակ այն համայնքին, որ անհոգ և շառայլ ընտանիքներ ունի. Ծշուառութեան խանձարուրներ են այդպիսիները, քանի որ նորա անուցանում. Են իրենց մէջ լոկ աշխարհաւեր մի սերունդ:

Կարմոց է արդեօք նոր աշխարհն ընտանիք պահել, հրաժարուելով նոյն երկու գործօնների առաջնորդութիւնից. ամեններն ոչ, սակայն ժամանակիս մարդուն վիճակուած է և մի նոր պարոք, այն է աշխատանքին և տնտեսութեանն այնպիսի ուղղութիւն տալ, որ նորահաս սերունդը զուրկ չմնայ ժամանակակից կրթութեան բարիքներից. այս վերջիններս են ահա նոր զոյգի ամենալաւ պոլյգն ու տուայրը,

1) Տ. Գօշ Մխ. Դատաստանագիրք Ա. ճիա:

2) Տ. անդ. Ա. ճիր.

3) Տ. անդ. Ա. ճիգ: